

ՈՒՍԱՆՈՂ ԱՆՁԻ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ՍԵՌԸ

Բասկո Լ. (Ավինյոնի համալսարան, Ավինյոն, Ֆրանսիա)

louis.basco@univ-avignon.fr

ներկայացման ամս.՝ 12.06.2019

գրախոսման ամս.՝ 01.08.2019

տպագրության ընդունման ամս.՝ 13.9.2019

Սույն հոդվածը նկարագրում է կին-տղամարդ հարաբերությունների թեմայով հետազոտական մի ծրագիր ուսանողների՝ իրենց անձի մասին ունեցած պատկերացումների միջոցով: Այս մեթոդաբանությամբ նախ և առաջ Ֆրանսիայի Ավինյոնի համալսարանի 7-ական ուսանողների և ուսանողուհիների առաջարկել են պատասխանել 6 հրահանգների՝ զինանշան ստեղծելու նպատակով: Մեթոդը պետք է թույլ տար կատարելու Ես-ի իսկական վերլուծություն: Ուսանողին առաջարկում են անհատապես մտորել՝ ներգրավելով նրա անձը (պարզ ինքնառերեսմամբ), հետո տարվում են խաչաձև ինքնառերեսման փոխանակություններ: Հետազոտության նպատակն է հասկանալ, թե Ֆրանսիայում ուսանողուհու և ուսանողի անձի պատկերի վերաբերյալ պատկերացումների ընկալման մեջ տարբերություններն ինչպես կարող են արտահայտվել: Ուսանողների կատարած և հետազոտողների վեր հանած տարբեր մեկնաբանությունների հիման վրա համադրական և վերլուծական աշխատանքը թույլ կտա քննության առնել տարբերությունների տարբեր մակարդակներ:

Հանգուցային բառեր՝ ուսանող, սեռ, ինքնապարկերացում, պարկեր, զինանշան:

Կարևոր է նկարագրել, բացատրել ուսանողների պատկերացումներն իրենց անձի մասին: Սույն հետազոտությունը կանդրադառնա կին-տղամարդ հարաբերություններին: Լայն առումով այն կընդգրկի սեռի (կանաց կամ տղամարդկանց, արականի և իգականի, սեռականության) վերաբերյալ աշխատանքները:

Այսպիսով, կուսումնասիրենք պատկերացումներում առկա տարբերությունները (մասնավորապես՝ ուսանողների շրջանում): Տարբերություններն ինչպե՞ս կարող են դրսևորվել ուսանողի և ուսանողուհու անձի վերաբերյալ պատկերացումների ընկալման մեջ, մասնավորապես՝ Ֆրանսիայում:

«Ուսանող անձ» հասկացությունը: Մեր խորհրդածության հիմքում անձ հասկացությունն է: «Անձ» բառի առաջնային բնորոշման հիմքում «persona» բառն է, որը լատիներենում նշանակում է «դիմակ», որի ետևում անձը թաքցնում է իր իրական բնույթը: «Ո՞վ ես դու, ուսանող»: Ինչպես Ադա Աբրահամը «Ո՞վ ես դու, դասավանդող»²⁰ հարցն ուղղում էր դասավանդողներին, մենք էլ կարող ենք այն փոխա-

²⁰ Ադա Աբրահամ, կլինիկական հոգեբանության և խմբային հոգեվերլուծության մասնագետ: 1984թ. նա ինքն իրեն հարց ուղղեց՝ «Ո՞վ ես դու, դասավանդող»: Լինելով համալսարանների պրոֆեսոր և գիտաշխատող՝ նրան մասնավորապես

կերպել և ուղղել ուսանողներին : Ուսանողի անձի ինքնության հարցը մեր մտորումների կենտրոնում է: Հոգեբանության մեջ ինքնության հասկացությունը կապված է «Ես»-ի գաղափարի հետ: Համալսարանում ուսումնառության շրջանակում ուսանողի անձի «Ես»-ը կապված է նրա վարքագծի, վերաբերմունքի և արարքների հետ:

Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է իր ֆիզիկական մարմնի վերաբերյալ ունեցած համոզմունքների (արտաքին տեսք, առողջություն...), անձնային բնութագրերի (անհատականություն, բանականություն, ունակություններ, վարպետություն...), իր սոցիալական հարաբերությունների (ընտանիքի անդամների, ընկերների, գործընկերների և այլոց հետ), գիտակցաբար որդեգրած իր համոզմունքների (հավատամք, վերաբերմունք, կյանքի փիլիսոփայություն...), իր անձնական կյանքի հարաբերականորեն կայուն գնահատմանը կամ նկարագրությանը:

Ընդհանուր առմամբ «Ես»-ի հասկացությունը համապատասխանում է հետևյալ բնույթի հարցերին տրված պատասխաններին՝ «Ո՞վ եմ ես», «Ի՞նչ եմ ես», «Ինչպիսի՞ անձ եմ ես», «Որո՞նք են իմ ուժեղ և թույլ կողմերը»:


Ուսանողն անձ է: Նա, նախ և առաջ անձ է, ում նախորդ փորձերը պայմանավորելու են իր համալսարանական աշխատանքն ու այն կազմակերպելու ձևը: Ուսանողի անձը կառուցվելու է մի կողմից իր իրականության հիման վրա, այն բանի հիման վրա, թե ով է ինքն իրականում, մյուս կողմից՝ հաստատության այն համատեքստի հիման վրա, որ համալսարանն է ներկայացնում, և որը պահանջում է իր մեջ ամփոփել նաև « persona »-ն:

Ուսանողի անձը կառուցվում է «Իրական» կամ «Խորքային ես»-ի և «Ուսանողի ես»-ի միջոցով

- *«Իրական» կամ «Խորքային ես»*
- «Իրական ես»-ը իրական անձն է՝ իր բուն էությանը: Խոսքը այն «Ես»-ի մասին է, որ նա կառուցում է զգայական և նյութական մակարդակում :
- *«Ուսանողի ես»-ը*: Սա այն «Ես»-ն է, որ ուսանողը պատրաստվում է կառուցել՝ պատասխանելու համար հետևյալ հարցերին՝ «Ինչպե՞ս լինել գիտակ ուսանող», «Ինչպե՞ս լինել արդյունավետ ուսանող», «Ինչպե՞ս նախապատրաստել իր ապագան»: Այսպիսով, «Ուսանողի ես»-ը կառուցվելու է հետևյալի հիման վրա.
- «Սոցիալական ես»-ի՝ ուսանողի անձի, որն առերեսվում է ուսանողական համայնք հանդիսացող և իր օրենքներն ունեցող սոցիալական խմբի հետ:
- «Սահմանակարգված ես»-ի, որը հաստատվում է մանկավարժական և դիդակտիկ դաշինքներով, որոնք միավորելու են ուսանողին և համալսարանական հաստատությունը:

հետաքրքրել է դասավանդողն ու իր անձը: Ուսուցիչների մասնագիտական կրթությունից բացի նա անդրադարձել է նաև նրանց անձի ձևավորմանը: Ուսուցիչը դասավանդում է, այդուհանդերձ նա ունի կյանքի իր փորձը, որն էլ պայմանավորելու կամ ուղղորդելու է նրա վերաբերմունքը: Այսպիսով, Ադա Աբրահամը կարևորում է դասավանդողի «ես-ի վիճակները»:

«Իդեալական ես»-ի, որը համապատասխանում այն է ուսանողի «Ես»-ին, ով հաջողության է հասնում իր մոտիվացիաների հիման վրա: Սա այն է, ինչը կապ է ստեղծում երազանքի, մտադրությունների ու ծրագրի միջև:



Նկար 1. Ուսանող անձը (Լ. Բասկո, 2016)

«Անձնական ես»-ը/ «Խորքային ես»-ը և «Ուսանողի ես»-ը կանոնավոր կերպով փոխազդում են: Այդ երկու «Ես»-երից յուրաքանչյուրին լավ ճանաչելու դեպքում կարելի է «վերահսկել», կառավարել, չափել այդ փոխազդեցությունները և հատկապես նրանք, որոնք կարող են բացասաբար ազդել անձի վրա: Այլ կերպ ասած՝ խաթարված «Խորքային ես» -ը/ «Իրական ես»-ը կարող է ապակայունացնել «Ուսանողի ես»-ը, և հակառակը:

Կլինիկական մոտեցում: Կլինիկական մոտեցումը, որը կրթության և դաստիարակության մեջ նոր հասկացություն է, հիմնվում է մի մեթոդի վրա, որն արժևորում է այն գործողությունները, որոնց միջոցով ուղղորդող անձը մոտեցնում է մարդկային վարքի դրսևորումները: Ըստ Մարտին Լանի-Բեյլի՝ կլինիկական մոտեցումը ենթադրում է ուշադիր և ներառական ունկնդրում: Անձանց, ում հետ տարվում է աշխատանքը, առաջարկում են անձամբ ներգրավվել և այդպիսով բացահայտել այն, ինչը խորքային է, նույնիսկ՝ որոշել և ընդունել առաջարկված փոփոխությունը: Ուղղորդող անձինք առաջարկում են ուղին, ուղղորդում քայլերը՝ շարունակ միջամտելով, երբեմն էլ՝ կասկածելով:

IV. Հետազոտության փուլեր: Մեր հետազոտությունն իրականացվել է Ավինյոն համալսարանի տեղեկատվության/հաղորդակցության բաժնի բակալավրիատի եւ մագիստրատուրայի ուսանողների համար նախատեսված սեմինարների շրջանակում:

Հետազոտությանը մասնակցած ուսանողները եղել են կամավորներ: 7-ական ուսանողների և ուսանողուհիների առաջարկել ենք 6 հրահանգների հիման վրա լրացնել գինանշանի պատկերը: Յուրաքանչյուր ուսանողի անհատապես ուղղորդել է մեկ գիտաշխատող (յուրաքանչյուր ուսանողի հետ՝ 3 ժամ տևողությամբ մեկ հանդիպում):

Երբ մարդն աշխատում է զինանշանի պատկերի վրա, ապա ստիպված է մտորել՝ ելնելով իր պատկերացումներից: Այս գործիքն առաջին անգամ առաջարկել է Անդրե Պերետտին՝ «Սևրի բարեկամները» ամսագրում, 1983թ.²¹: Նա բնութագրում է դա որպես պարզ, պրոյեկտիվ տեխնիկա: Մեզ՝ հետազոտողներին, զինանշանը հնարավորություն է ընձեռում տեսական լրացումներ կատարել դրականորեն հանդես գալու նկատմամբ անհատական և մշակութային դիմադրությունների, կոլեկտիվ և անհատական կյանքում առկա սիմվոլիզմի, էքզիստենցիալ որևէ ծրագրում գտնվելու և այլնի վերաբերյալ:

Պատկերացման հասկացության տեսական հիմքից ելնելով՝ զինանշանը թույլ է տալիս անդրադառնալ կոգնիտիվ և սոցիալական կողմերին.

- սուբյեկտի և աշխարհի միջև կապին,
- սուբյեկտի և գործողության (իր և ուրիշների) միջև կապին,
- սուբյեկտի՝ ինքն իր հետ ունեցած կապին:

Ելնելով զինանշանից՝ կարող ենք նաև հնարավոր քննարկում նախատեսել: Տեսնենք, թե նախապատրաստական դասընթացում ինչ մեթոդ կարող է կիրառվել՝ ելնելով զինանշանի հետ աշխատանքից: Յուրաքանչյուր ուսանողի առաջարկում են տեղեկություններ տալ, լրացնել զինանշանը՝ ելնելով շատ հստակ հրահանգներից: «Պրոյեկտիվ կողմը» թույլ է տալիս, որպեսզի յուրաքանչյուրը զարգացնի իրեն իսկ արժևորող մտորելու կարողություն: Չինանշանը կատարելապես հարմարեցված է համապատասխան ուսուցման իմաստների և արժեքների վերաբերյալ մտորմանը՝ թույլ տալով «օգնել խմբի անհատներին՝ միասնաբար գիտակցելու իրենց խորքային մշակութային կառուցվածքը²²»: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ պատկերացումների անհատական արտահայտման հնարավորություն է ընձեռում: Չինանշանը թույլ է տալիս նաև «Ես-ի պատկերի հետ փոխաբերական բնույթի աշխատանք իրականացնել²³»:

Այս մեթոդը Ես-ի իսկական վերլուծության հնարավորություն է ընձեռում: Ուսանողին առաջարկելու ենք մտորել անհատականի (անձը կկատարի միայն առաջարկված տարբեր հրահանգները) և անձնականի մասին (յուրաքանչյուր ուսանող կներդնի իր անձի եզակիությունը):

Անձի կառուցվածքի վերաբերյալ մեր աշխատանքներում օգտագործված զինանշանի մեթոդաբանությունը հետևյալն է.

- Ո՞ր կարգախոսը լավագույնս կբնութագրեր Ձեր անձն իբրև ուսանող:

Սա համապատասխանում է որևէ առաժի, որն ամփոփում է սուբյեկտի վերաբերմունքը, նրա հոգեվիճակը: Խոսքը հակիրճ նախադասությամբ այն խորքային համոզմունքի ձևակերպման մասին է, որը կարող է առաջարկված ուսուցման շրջանակում ոգևորել նրան:

²¹ Les amis de sèvres, n ° 3, L'évaluation formative, sept.1983

²² André de Peretti, Gamme du blason, Les Amis de Sèvres, 1986-3, n°123, p. 78.

²³ André de Peretti, Organiser des formations, Paris : Hachette, 1993.

- Ի՞նչ խորհրդանշանով կներկայացնեիք Ձեր անձը՝ իբրև ուսանող:

Սա պատկերում է նկարի, սխեմայի, լոգոյի միջոցով, ինչը բացառում է բառերով կամ նախադասություններով ցանկացած գրառում: Այն պետք է խորհրդանշված լինի՝ հնարավորություն ընձեռելով բացահայտել հարաբերությունները:

- Նշեք Ձեր երեք արժանիքները (Ես ... եմ):

- Նշեք այն երեք կարողությունները, որոնք կապված են այդ արժանիքների հետ (Ես ունակ եմ...):

- Նշեք երեք նպատակ, որ ուսման մեջ դրել եք Ձեր առջև:

- Նշեք այն երեք միջոցները, որոնց օգնության ուսման մեջ կհասնեք Ձեր նպատակներին:

Այսպիսով, այս առաջադրանքների միջոցով հնարավոր է դառնում, որպեսզի ուսանողը հանձն առնի մտորելու դրական կամ բացասական կողմերի մասին: Միաժամանակ գործ ունենք նաև ինքնաճանաչման և ինքնագնահատականի հանձնառության հետ: Տրված հրահանգների հիման վրա զինանշանը լրացնելուց հետո դասախոսի ուղեկցությամբ ուսանողը բացատրում է, թե ինչ է որոշել նշել վանդակներից յուրաքանչյուրում: Ուղեկցումը կլինիկական հավակնություն ունեցող հնարք է²⁴: Անդրե Պերետտիի բնորոշմամբ այդ գործիքը պարզ պրոյեկտիվ տեխնիկա է:

Դա ոչ թե գիտելիքների, այլ ավելի շուտ՝ մի ամբողջություն կազմող տարբեր մակարդակների տարրերի համադրություն է, որը թույլ է տալիս գաղափար կազմել որևէ առարկայի, երևույթի կամ իրավիճակի մասին: Իր արտահայտչաձևով զինանշանն ավելի շատ խորհրդանշան է, պատկեր, բայց նաև՝ պատմություն, որը կարող է կլինիկական լինել: Հետևաբար՝ զինանշանը թույլ է տալիս արտահայտել և հակադրել անձնական երևակայության դրսևորումները: Ըստ Պ. Գավլանիի՝ այն մեզ ուղղորդում է դեպի երևակայականի մարդաբանություն²⁵:

Զինանշանները լրացնելուց հետո ուսանողներին առաջարկվել է պարզաբանել իրենց պատասխանները 6 հարցից (6 հրահանգներից) բաղկացած, մասամբ՝ ուղղորդող կլինիկական զրույցի շրջանակում: Յուրաքանչյուր ուսանողի ուղղորդել են՝ բացատրելով իր պատասխանները: Զինանշանը լրացնելու ժամանակ գիտաշխատողը ուսանողներին բացատրել է հրահանգները:

Այս փուլում, երբ ուսանողները պատասխանել են տրված հրահանգներին (նմանապես էլ 2-րդ փուլում), նրանք բանավոր պարզաբանել են իրենց շարադրածը: Գիտաշխատողը չի կատարել ո՛չ մի մեկնաբանություն, ո՛չ մի վերլուծություն, միայն խնդրել է տալ լրացուցիչ բացատրություններ: Գիտաշխատողը երևան է հանել ամենաբնական դիտողությունները:


Այսպիսով, զինանշանը խոսքային գործիք է:

Զինանշանը լրացվել է տրված հրահանգների հիման վրա, դասավանդողը ուսանողի կողքին է եղել և լսել նրա բացատրություններն այն մասին, թե ինչ է

²⁴ Basco, 2012.

²⁵ Galvani, 1993.

որոշել նշել յուրաքանչյուր վանդակում: Ուղեկցումը կլինիկական հավակնություն ունեցող հնարք է:



Պատկեր 2. Ֆրանսիացի ուսանողի զինանշանի օրինակ

2. 7-ական ուսանողներին և ուսանողուհիներին համախմբել են և առաջարկել միմյանց համար պարզաբանել իրենց տված տարբեր պատասխանները, նրանց հետ անց է կացվել նաև կլինիկական զրույց:

V. Ուսանողների պատկերացումները: Հարցազրույց անցնող ուսանողների համար, լինեն նրանք պատանիներ, թե աղջիկներ, դպրոցից հետո համալսարանը «պարտադրված ուղի» է, որը չպետք է լռության մատնի ուսումնառության տվյալ ընտրության բազմազան պատճառները: Երբ համալսարանն ընտրում են լավ մտորելուց հետո, պարզվում է, և ավելի շատ՝ աղջիկների պարագայում, որ ուսումն ընտրում են ոչ միայն այն պատճառով, որ դա օգտակար է, այլև՝ որ այն հաճելի է: Կարծես թե բոլոր ուսանողների համար էլ համալսարանը դպրոցի շարունակությունն է, երբ չկան այլ ծրագրեր: Համալսարանում գրանցվելը ուսում ստանալու հնարավոր ծրագիր է, որը ստիպում է որոշ ուսանողների հեռանալ իրենց ընտանիքից: Ֆրանսիացի ուսանողները, առանց սեռային տարբերակման, առանձնապես հետաքրքրված չեն իրենց ուսումը միջազգային շարժունության միջոցով շարունակելով:

Խորհրդանշանի մակարդակում դինամիզմի և նպատակի գաղափարն ընդհանուր է բոլոր ուսանողների համար: Դա բխում է այն գիտելիքների կարևորությունից, որ համալսարանը կարող է տալ նրանց: Ուսանողները բացատրում են, որ գնահատում են այն հնարավոր ազատությունը, որ իրենց կարող է ընձեռվել համալսարանում: Մի բան, որ ճիշտ կառավարելու դեպքում կարող է բարելավել ուսանողի աշխատանքը: Ուսանողները հաստատում են, որ պետք է հավասարակշռություն լինի համալսարանական կյանքի և աշխատանքի, ազատ ժամանցի (անձնական կյանքի) և քնի միջև:

Ընդհանուր առմամբ բոլոր ուսանողները սիրում են այն առարկան կամ առարկաները, որոնց գրանցվել են, և միայն երկրորդ կուրսից սկսած է, որ տեսնում են ուսման և մասնագիտության միջև կապը: Մուտք գործելով բարձրագույն կրթական համակարգ՝ ուսանողները, անկախ սեռից, դասավանդման նոր մեթոդներ և համալսարանին բնորոշ իրավիճակներ են բացահայտում:

Առաջին կուրսում ուսանողների հանդիպած դժվարությունները, կարծես թե, հաստատում են այն միտքը, համաձայն որի համալսարան ընդունվելը ժամանակացույցի կազմակերպման և կառավարման, սովորելու եղանակի փոփոխության մակարդակում հարմարեցման փուլ է: Հարմարվելու հետ կապված այդ դժվարությունները «նորեկ ուսանողների» ամենահաճախ բարձրաձայնած խնդիրներից են: Բարձրացվում է մանկավարժական և դիդակտիկ դաշինքի հարցը: Մանկավարժական դաշինքը գերակա և բացահայտ կանոններով ուսանողին կապում է իր համալսարանի, իր բաժնի, իր մասնագիտության հետ, ինչի շնորհիվ հաստատությունն ի կատար է ածում իր պարտականություններն ու պատշաճ կերպով գործունեություն ծավալում: Դիդակտիկ դաշինքն ուսանողին իր մասնագիտության, իրեն դասավանդողների հետ է կապում դասընթացներից յուրաքանչյուրի ծրագրերով, բովանդակությամբ, մեթոդներով, գործիքներով, գնահատման եղանակներով: Ուսանողները կարևորում են դաշինքի այս հասկացությունը: Ուսանողը պետք է հարմարվի ժամանակային նոր կարգերին՝ բացահայտելով համալսարանական ժամատախտակների անկանոնություններն ու ընդմիջումները: Ուսանողի առօրյա կյանքը հիմնականում կազմակերպվում է այդ ժամանակացույցի շուրջը: Բացի դրանից, ուսումնական ժամանակն այլևս չի ենթարկվում որոշ հարկադրանքների, ներկայությունն այլևս կանոնավոր կերպով չի ստուգվում: Ուստի ուսանողն ինքը պետք է պատասխանատվություն ստանձնի և որոշում կայացնի: Այսպիսով, ձեռք բերված նոր ազատությունը կարող է ընկալվել իբրև «թակարգ», «կեղծ ազատություն»: Սեռերի առումով նշանակալից տարբերություն չկա:

Ինչ վերաբերում է ֆրանսիացի ուսանողներին, ապա ժամանակացույցի կառավարման հարցը պայմանավորում է նրանց հաջողության նշանակալից մասը: Հաճախ վարձատրվող աշխատանք ունեցող ուսանողները դժվարանում են դասերին ներկա գտնվել: Խորհրդանշանների առումով սեռերի միջև նշանակալից տարբերություն չառքի է կամ գրեթե չկա: Ուսանողները հաճախ շփոթում են որակն ու արժեքները:

Անձնական որակները թույլ են տալիս ձեռք բերել փորձ և ձևավորել սոցիալական հմտություններ: Ուսանողի արժեքներն աջակցում են նրան պրակտիկ գործունեության ժամանակ: Զրույցի ընթացքում պարզորոշ կերպով ի հայտ են գալիս անձի որակները: Բոլոր ուսանողների համար սոցիալական հմտությունների և միասին ապրելու գաղափարը կապվում է համերաշխության հետ: Սոցիալական կապը հատկապես առանձնանում է աղջիկների մոտ: Թե՛ ուսանողներին, և թե՛ ուսանողուհիներին բնորոշ է լայնախոհությունը՝ ուսման մեջ առաջադիմելու համար անհրաժեշտ հմտություններից մեկը: Նրանք հաստատում են ուսում ստանալու և այն իրենց մտահոգությունների բուն առարկան դարձնելու իրենց վճռականությունն ու

իրական կարիքը: Ուսման մեջ մոտիվացիայի դրսևորումն ամենաշատ հանդիպող բնավորության գիծն է: Այս հարցից բխում է ինքնավարության հարցը: Ուսման մեջ հաջողության հասնելու համար աղջիկներն ավելի ուշ են հասնում անհրաժեշտ անկախությանը, քան տղաները: Նրանց ցուցաբերած ինտելեկտուալ հետաքրքրասիրությունը լավ կազմակերպված կենսաձևի շնորհիվ հատկապես ուսումից դուրս անձնապես աճելու ցանկության նշանն է:

Հենց առաջին կուրսից ուսանողներն ակնկալում են հարմարվել դասացուցակին: Համալսարանական այդ առաջին տարվա ընթացքում աղջիկներն ամենաշատ սպասելիքներն իրենց դասախոսներից ունեն: Ուսանողների՝ իրենց առջև դրված նպատակները հաճախ վերաբերում են իրենց սպասելիքներին, որոնք մեծապես կապված են ուսման մեջ իրենց հաջողության հետ: Աղջիկները դրանից բացի ակնկալում են լավ կազմակերպվածություն և լավ հարաբերություններ դասախոսների հետ: Ուսանողները հիշատակում են նաև անձնական հավասարակշռությունը, այդուհանդերձ ցանկալի նպատակներին հասնելու համար օգտագործվող միջոցներից միակ համապատասխան տարրը մնում է աշխատանքը: Բոլոր ուսանողները կյանքի պլան են կառուցում աշխատանքի, հաջողության և կյանքի շատ խիստ հիզիենայի ու խիստ տրամաբանական մտքի շուրջ: Ուսանողների 80%-ը հիշատակում է գումար վաստակելու ցանկությունը: Իբրև դրան հասնելու միջոց ուսանողները ներկայացնում են է՛լ ավելի տքնաջան աշխատելը:

Այսպիսով, նկատում ենք խիստ կենտրոնացված միտում աշխատանքի և մասնագիտական հաջողության շուրջ:

Եզրակացություն: Հետազոտությունը, որն իրականացվել է Ֆրանսիայում՝ ուսանողների և ուսանողուհիների շրջանում, վերանայում է անձի՝ իր իսկ մասին ունեցած պատկերացումները:

Համապատասխանաբար տղամարդկանց և կանանց տեղը, նրանց դերերը, կարգավիճակներն ու հեռավորությունները վեր են հանում անձի ինքնության հարցերը, որոնց հետ հաճախ կապված են տարբեր մշակույթներ:

Գրականություն

1. **Ada A., dir.** L'enseignant est une personne, Paris, E.S.F, 1984.
2. **Basco L.** « La démarche clinique dans l'accompagnement en formation: vigilance ET persévérance? », Spécificités, Nr. 5, 2012. pp. 241-256.
3. **Basco L., Cote F.** Accompagner l'étudiant, De la connaissance de soi à la construction de la personne, Lyon, Chronique sociale, 2010.
4. **Fischer G.-N.** Les concepts fondamentaux de psychologie sociale, Paris, Dunod, 1996.
5. **Galvani P.** « Autoformation et fonction de formateur: des courants théoriques aux pratiques de formateurs. Les Ateliers Pédagogiques Personnalisés », Revue française de pédagogie, 102, 1993. pp. 112-114.

6. **Lani-Bayle M.** « La démarche clinique à l'épreuve de l'université: un enjeu complexe », in Cifali M., T. Périlleux, dirs., Les métiers de la relation malmenés. Répliques cliniques, Paris, L'Harmattan, 2012. pp. 133-146.
7. **de Peretti A., Boniface J., Legrand J.-A.** Techniques pour communiquer, Paris, Hachette.
8. **Rogers C.-R.**, 1996, Le développement de la personne, Paris, Dunod, 2014.

STUDENT'S IMAGE AND SEX

Basco L. (University of Avignon, Avignon, France)

Research approaches the topic of the ratios women/men through the representations, which the students have of their persons. Methodology proposes initially to 7 male students and 7 female students to inform a blazon starting from six instructions in Avignon Université France.

This method will allow a true analysis of Oneself. After inviting the student to an individual and personal reflection (simple autoconfrontation), cross exchanges in autoconfrontations will be led. This research will make it possible to understand : how and why variations can be raised in the reception of the representations of the image of the student as a person according to the gender in France? Starting from the various speeches given by the students and raised by the researchers, a work of both analysis and synthesis will make it possible to consider several levels of variations.

Keywords: *Student, gender, self-representation, picture, blazon*

IMAGE ET SEXE DE L'ÉLÈVE:

Basco L. (Université d'Avignon, Avignon, France)

Cet article décrit le protocole d'un programme de recherche sur le thème des rapports femmes-hommes au travers des représentations que les étudiants ont de leur personne. La méthodologie propose dans un premier temps à 7 étudiants masculin et 7 étudiantes féminin de répondre à six consignes afin de construire un blason au sein d'Avignon Université France. Cette méthode devrait permettre une véritable analyse de Soi. Après avoir invité l'étudiant à une réflexion individuelle qui engage sa personne (en autoconfrontation simple), des échanges en autoconfrontations croisés seront conduits. Cette recherche est destinée à comprendre en quoi des écarts peuvent être mis en évidence dans la réception des représentations de l'image de la personne étudiante féminin et de la personne étudiante masculin en France. A partir des divers discours donnés par les étudiants et relevés par les chercheurs, un travail d'analyse et de synthèse permettra d'envisager plusieurs niveaux d'écarts.

Mots clés: *Étudiant, genre, représentation de soi, image, blason.*